

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05**  
**Վիճակագրության պետական խորհրդի նիստի**

22.04.2003թ.

ժ. 11<sup>00</sup>

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Զ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*),

**Օրակարգի նախագծում` երկու հարց.**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:  
*/Զեկուցող` Ա. Հայրապետյան/*

2. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:  
*/Բովերկության արդյունքները- կողմ`7, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին՝**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 229-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:  
*/Զեկուցող` Ա. Հայրապետյան/*

*Նշվեց, որ ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 14-ի 10-րդ կետի և հոդված 40-ի 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով` հարկ է համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի աշխատակարգում» (հավելված 1) և «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության առաջատար և կրտսեր քաղաքացիական ծառայողների ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգում» (հավելված 2): Մասնավորապես, առաջարկվեց հավելված 1-ի 6-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով, 12-րդ կետի ԺԷ ենթակետից հանել «պաշտոնապես» բառը, 20-րդ կետում «պաշտոնական հրապարակումից հետո` եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «հրապարակումից անմիջապես հետո» բառերով և հավելված 2-ի 6-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով:*

**ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող և այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական

ծառայողների ատեստավորում ացկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» թիվ 229-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշմամբ հաստատված հավելված 1-ի`

ա) 6-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով,

բ) 12-րդ կետի ժե/ ենթակետից հանել «պաշտոնապես» բառը,

գ) 20-րդ կետում «պաշտոնական հրապարակումից հետո` եռօրյա ժամկետում» բառերը փոխարինել «հրապարակումից անմիջապես հետո» բառերով,

2. Որոշմամբ հաստատված հավելված 2-ի 6-րդ կետում «18» թիվը փոխարինել «24» թվով:

*/Քվեարկության արդյունքները - կողմ` 7, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

2. Այլ հարցեր

ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դանիելյանի կողմից ներկայացվեց հաղորդում «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքից բխող մի շարք միջոցառումների իրականացման ընթացքի և այլ հարակից հարցերի վերաբերյալ, մասնավորապես` գիտամեթոդաբանական խորհրդի հրավիրում, տեղեկատվության հավաքագրման նոր կարգի մշակում, «Վարչական իրավախախտումների մասին» օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ներկայացում և ՀՀ ԱՎԾ-ում արխիվացման կարգի մշակում:

Խորհուրդը որոշեց հավանություն տալ ներկայացված հաղորդմանը:

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան